ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով գնանշման հարցման միջոցով <<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքների>> գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի հերթական նիստի

ք. Երևան *12.07.2017թ.*

ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Եզդողլյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Գևորգյան, Լ. Ղափլանյան, Ռ. Բրսոյան , Ս. Խառատյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Փ. Խաչատրյան
ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07 ***ծածկագրով գնանշման հարցման միջոցով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին***

Հիմք ընդունելով <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 34 -րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետը և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 07.07.2017թ. կայացած նիստի ժամանակ հանձնաժողովը որոշեց որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<ՄարտՇին>> ՍՊ ընկերությանը , առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1. **Գնանշման հարցման միջոցով գնման գործընթացին ներկայացված հայտերի գնահատման արդյունքների մասին**

Վերը նշված ժամանակահատվածում <<ՄարտՇին>> ՍՊ ընկերության կողմից պատշաճ ներկայացվեցին պահանջվող փաստաթղթերը, որոնք ուսումնասիրվեցին և գնահատվեցին հանձնաժողովի կողմից բավարար:

Միևնույն ժամանակ հիմք ընդունվեց ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 44-րդ կետը՝ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության արդյունքը, որ մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

2. **Գնանշման հարցման միջոցով գնման գործընթացի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին**

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, գործընթացը մտնում է անգործության ժամկետի մեջ /5 օրացուցային օր/, որի ավարտից հետո <<ՄարտՇին>> ՍՊ ընկերությանը սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Ստեփան Եզդողլյան (նախագահ)

Նորայր Գևորգյան

Լուսինե Ղափլանյան

Ռուզաննա Բրսոյան

Սարգիս Խառատյան